ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 20 - 25-ը
Ռուսաստանի Դաշնություն, (Մոսկվա, Կոստրոմա, Սանկտ Պետերբուրգ) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Արմեն Եգանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա, Կոստրոմա, Սանկտ Պետերբուրգ), 2022 թվականի հունիսի 20-25-ը:
4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**
   «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից Համաձայնագրի դրույթների կատարմանը ծանոթանալու նպատակով, պետք է իրականացվեն նախնական մոնիտորինգային այցելություններ, որի արդյունքում իրականացվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (տվյալ գործուղման ընթացքում՝ ՌԴ-ի) թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառության հետ կապված գործառույթների մշտադիտարկում:

6. **Քննարկված թեմաները**
   Հանձնաժողովն մշտադիտարկել է Ռուսաստանի Դաշնության կողմից համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության և շրջանառության օրենսդրական դաշտի համապատասխանացումը Համաձայնագրի պահանջներին, հարգորոշման և հարգադրոշմման կազմակերպությունների գործունեության հետ կապված ընթացակարգերը, ինչպես նաև այդ կազմակերպությունների տեխնիկական հագեցվածության մակարդակը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հանդիպումների ընթացքում քննարկվել են հարցեր՝ կապված ԵԱՏՄ անդամ երկրներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության և շրջանառության բնագավառի օրենսդրության կատարելագործման, լավագույն փորձի ընդօրինակման և անդամ երկրների օրենսդրության ներդաշնակեցման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի

առավել պարզեցնել ԵԱՏՄ տարածքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության տեղաշարժը, մասնավորապես՝ հարգադրոշման փոխճանաչելիության միջոցով՝ տնտեսվարողների ֆինանսական և վարչական բեռի նպատակահարմարությանը:

Հանձնաժողովի հայկական կողմի կազմում աշխատանքներին մասնակցել է նաև ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության պետ Վլադիմիր Թամրազյանը:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մշտադիտարկման արդյունքում ձևավորվել են նախնական գնահատականներ, որը կքննարկվի և ամփոփելով հայկական կողմի դիրքորոշումը՝ կներկայացվի Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հայկական ոսկերչական արտադրանքի ճնշող մեծամասնությունն արտահանվում է դեպի ռուսական շուկա՝ առաջկվել է և նախնական պայմանավորվածություն է ձեռքբերվել քննարկել ռուսական կողմի մասնակցությամբ Հայաստանում ժամանակակից տեխնիկայով հագեցած՝ հարգորոշման, հարգադրոշմման և մակնշմն լաբորատորիայի հիմնման հարցը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները

Հանձնաժողովի (Ռուսաստանի Դաշնությունում) մշտադիտարկումը հնարավորություն տվեց ավարտել ԵԱՏՄ տարածքում թանկարժեք մետաղների և քարերի շրջանառության ոլորտում իրականացվող մշտադիտարկման առաջին փուլը և գնահատել անդամ երկրներում Համաձայնագրի դրույթների կատարման մակարդակը:

Արդյունքում (Համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման պարագայում) կստեղծվի բարենպաստ պայմաններ ԵԱՏՄ պետությունների տարածքում թանկարժեք մետաղների և քարերի անխոչընդոտ շրջանառության համար:

10. Գործուղվողը, ստորագրություն, ամսաթիվ

Արմեն Եգանյան

28.06.2022թ.